

# Դավիթ Լոքյանը Արագած համայնքում ծանոթացել է ՀՀ մարզպետարանների աշխատակիցների համար կազմակերպված դասընթացի աշխատանքներին

28.10.2016

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Դավիթ Լոքյանը հոկտեմբերի 28-ին աշխատանքային այց կատարեց Արագածոտնի մարզի Արագած համայնք, որտեղ ծանոթացավ Հայաստանի մարզպետարանների աշխատանքային խմբերի համար կազմակերպված եռօրյա դասընթաց-քննարկումների ընթացքին: Նախարարին ուղեկցեց Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզալյանը:

ՀՀ մարզերի 2017-2025թթ. զարգացման ռազմավարությունների մշակման ծրագրի շրջանակներում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը հոկտեմբերի 26-28-ը կազմակերպել է դասընթաց-քննարկումներ, որին մասնակցել են մարզպետարանների զարգացման բաժինների ներկայացուցիչներ: Ծրագիրն իրականացվում է ԵՄ ֆինանսավորմամբ, իսկ դասընթացն անցկացրել են ԵՄ փորձագիտական խումբը՝ տարածքային զարգացման խորհրդատու Ռոբերտ Գիրեյկոյի գլխավորությամբ:

Դավիթ Լոքյանը ծանոթացավ մարզային խմբերի ներկայացուցիչների հետ, հետաքրքրվեց յուրաքանչյուր մարզի զարգացման ծրագրով, հետևեց դասընթացի ժամանակ մարզային խմբերի կողմից մշակված ռազմավարական ծրագրերի ներկայացմանը: Նախարարը մի շարք դիտարկումներ կատարեց ներկայացված ծրագրերի վերաբերյալ, ընդգծեց, որ մարզերում տնտեսական զարգացում ապահովելու համար պետք է փաստարկված ծրագրեր ներկայացնել:

Ծրագրի առաջին դասընթացի նպատակն է մարզերի տարածքային զարգացման ռազմավարությունները (ՏՁՌ) մշակող աշխատանքային խմբերին ներկայացնել ՏՁՌ-ների մշակման գործընթացի տեխնիկական պահանջները, ՏՁՌ-ների մշակման համար անհրաժեշտ վերլուծական մեթոդները, իրավիճակի վերլուծությունը, ՍԿՏՏ վերլուծությունը, ինչպես նաև տրամադրել պրակտիկ գիտելիքներ և հմտություններ այդ խնդիրների լուծման վերաբերյալ:

ԵՄ փորձագետ, տարածքային զարգացման խորհրդատու Ռոբերտ Գիրեյկոյի խոսքով, տարածքային զարգացման նմանատիպ ջանքեր են ներդրվել Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում: «Այս աշխատանքը պահանջում է նոր մոտեցումներ: Ուզում եմ ընդգծել, որ մարզի զարգացման ռազմավարությունը չի կարող պատվիրված լինել միայն կառավարության կողմից: Այն նաև պետք է մշակվի հասարակական կազմակարպությունների և մարզային շահագրգիռ կազմակերպությունների կողմից», -ասաց Եվրոպացի փորձագետը:

Դասընթաց-քննարկումները շարունակական բնույթ են կրելու: Առաջին դասընթացին հաջորդելու են ԵՄ փորձագետ Ռոբերտ Գիրեյկոյի գլխավորած փորձագիտական խմբի այցերը Հայաստանի բոլոր մարզեր՝ դասընթացի մասնակիցներին տեղերում մասնագիտական աջակցություն ցուցաբերելու նպատակով: